

Անկարևոր խոհեր իշխանության և ընդդիմության օլիմպում գտնվողների համար

Համառոտագիր



Մարդկային
գարգացման
միջազգային
կենտրոն

Անխուսափելի վաղվա պարադիգմը

«Վաղը» միշտ էլ նուրբ խորհուրդներ է հղում ներկային: Կան մարդիկ, խմբեր, հասարակություններ, որոնք տեսնում, լսում ու հասկանում են անխուսափելի վաղվա ծածուկ շնչանքը, կան նաև այնպիսիք, որոնք գլխակորույս մխրճվում են ներկայի հորձանուտ, ստեղծում նոր գալարապտույտներ, հենց իրենք դառնում հորձանք՝ հայացք անգամ չնետելով ապագայի բարեկամական խորհուրդներին:

Առաջին խումբ մարդիկ, խմբերը, իշխանությունները, ընդդիմությունները, հասարակությունները, որպես արդյունք, գործում են առավելապաշտություններից անդին սեզմենտներում, աշխատում են խուսափել անդառնալիության գծերից, հենվում են ինստիտուցիոնալ հիշողությունների վրա և դառնում «ապագան անցյալ գումարած ավելացված արժեքն է» հավատամքով ներկայի լավ կամ վատ ճարտարապետներ: Այսօրվա բոլոր քայլերն այս դեպքում կշռվում են ապագայի անխուսափելի դերափոխությունների պատկերացումներով, «ինչ կլինի, երբ գա դիմացինի կոշիկները հագնելու իմ ժամանակը» արստրահումներով, դառնում ավելի ներառական, պակաս կտրուկ՝ ընդամին վաստակելով ապագայի կողմից ապագայի համար շնորհվող ինդուլգենցիա:

Երկրորդ խումբ մարդկանց, խմբերի, իշխանությունների, ընդդիմությունների, հասարակությունների դեպքում վաղվա հայացքով ներկայի քայլերը կշռելու մեխանիզմը մեծապես բացակայում է: Գերակայող է «ազդակ-հակազդեցություն» պարզունակ շղթան, ներկայի կերտումը անցյալի վախերի կամ փորձառության դեմ անընդհատ պայքարի է նմանվում, դիտարկվում է ներկայի ու ապագայի միջև խզում՝ գաղափարական/ գաղափարախոսական ցանկացած հիմնավորումով կատարված յուրաքանչյուր վնասումի, խեղումի, խլման համար վաղվա կողմից հաշիվ պահանջելու անխուսափելիության չզիտակցմամբ:

Մարդիկ և մարդկային խմբերը նման են իրենց ձեռագրերում, նման են նաև իրենց մոլորություններում, բացության կամ ագրեսիայի մեջ, նաև՝ ներկայում ապագան զգալու կարողություններում: Մարդիկ և մարդկային խմբերը ընտրություն ունեն՝ գործել կա՛մ հաշիվ առնելով ապագան, կա՛մ ոչ, բայց չկա ընտրություն մեկ ուրիշ հարցում՝ ապագան միշտ անխուսափելիորեն գալիս է:

Ընտրությունը քաղաքական համակարգի ներսում

Մարդկային ցանկացած խմբին ներհատուկ սխալականությունն ու ինքնամոռաց ոգևորությունը բացառություն չէ նաև երկրի քաղաքական միավորների համար՝ իշխանության համար և ընդդիմության համար, քաղաքական կուսակցությունների համար: Ոչ ոք չգիտի, թե հնարավոր անկման պահին ով կմեկնի այն ձեռքը, որ կկանգնեցնի դեպի անդունդ վայրընթացը: Չի բացառվում, որ դա լինի հենց ամենանվաղած կամ անտեսված ձեռքը: Հետևաբար, անդունդից հեռու հարթ վայրում յուրաքանչյուր կտրված ձեռք փոքրացնում է փրկության հավանականությունը անդունդի պոնկին: Սա է ասում հավանականության տեսությունը:

Համագործակցություն, մշտական երկխոսություն, հնարավորի սահմաններում ներառականություն. ահա ամենատրամաբանական ձեռագիրը ապագայավախ կամ ավելի խոհեմ քաղաքական միավորների և, առաջին հերթին, տվյալ պահի իշխանության համար:

Ընդունված է համարել, որ քաղաքական ուժերի միջև հարաբերությունները կարգավորվում են կա՛մ համագործակցային, կա՛մ մրցակցային մոդելներով: Մրցակցային մոդելը բերում է իշխանության կենտրոնացման, լսելի է դառնում միայն նրանց ձայները, ովքեր ավելի մոտ են իշխանությանը: Համագործակցային մոդելը, ընդհակառակը, առավել քիչ քաղաքականացված է. տարբեր ուժեր միմյանց համար ընդունելի մոտեցումների պարագայում համագործակցում են կոնկրետ խնդիրների լուծման ուղղությամբ:

Հայաստանում գերակայող է մրցակցային մոդելը: Միշտ է այդպես եղել: Դա նախևառաջ պայմանավորված է նրանով, որ առկա չեն քաղաքական Էլիտայի ձևավորման կայուն և հստակ



Երևան 0001
Սայաթ Նույա 19
Հեռ.՝ +374 10 582638
Ֆաքս՝ +374 10 527082

mail@ichd.org
www.ichd.org



մեխանիզմներ: Մինչդեռ Էլիտայի ձևավորման հիմքում պետք է լինեն կայացած քաղաքական ինստիտուտները: Կուսակցություններն ունեն թույլ զարգացած քաղաքական ինքնություն և զաղափարական անկայուն հիմք, հաճախ ձևավորվում են մեկ անձի շուրջ: Բացառությունները քիչ են: Իշխանությունը կարող է որոշել՝ ինչպիսի քաղաքական հարաբերություններ է ցանկանում կառուցել հորիզոնական, թե ուղղահայաց: Ներկա իշխանությունն իր հայտարարություններում բազմիցս նշել է, որ հորիզոնական հարաբերությունների մոդելն է որդեգրել, սակայն իրական կյանքում կրկին հարաբերությունների ուղղահայաց մոդել ենք տեսնում:

Ի հավելումն սրա, երկրում ստեղծվել է մի իրավիճակ, որը կարելի է կոչել «ծայրահեղ լեգալիզացիա»: Ցանկացած գործունեություն գնահատվում է բացառապես օրենքի տամին համապատասխանելու տեսանկյունից՝ պակաս ուշադրություն դարձնելով բովանդակությունը: Արդյունքում, հասարակության մեջ առաջին պլան են մղվում, ժողովրդական լեզվով ասած՝ «մօսօ գրողները», հետ մղվում՝ զարգացման ծրագիր կամ հայեցակարգ մշակողները: Արդյունքում, անցյալը հետևողականորեն հաղթում է ապագային, քանի դեռ վրա չի հասել ապագան:

Է, ետքը՞...

Ետքը՝ ոչինչ: Վերոգրյալը ոչինչ չի տա չափից դուրս ոգևորվածներին, ինքնավստահներին և փրկիչներին: Բոլոր «այլոք» կարող են մի պահ լուռ խորհել իշխանության և ընդդիմության քաղաքական բարձունքում գտնվելու այսպահայնության մասին և վերասրբագրել գոնե հաջորդող մի քանի ժամերի քայլերը:

Երբ իշխանության ու ընդդիմության օլիմպում ես, երբ շուրջդ եռում է, դու կիզակետում ես, լարված են ուժերդ, նվիրվել ես անմնացորդ ու գլխումդ կպչուն հարց է առաջանում, թե օրը 12-14 ժամ աշխատելուդ, այսքան լավ քայլերիդ, ազնվությանդ, անկաշառությանդ ու խելացի մտքերիդ հանդեպ ինչու՞ են լայն զանգվածներն ամեն հաջորդ օր ավելի անհաղորդ դառնում, անգամ՝ փնտվում բակերում, տաքսիներում ու սոցցանցերում, ուրեմն վերոգրյալը մեկ անգամ ևս կարդալու ժամանակն է: Նաև հիշելու Մուշեղ Իշխանի բառերը Արթուր Մեսչյանի հայտնի երգում.

*Երբ որ շահես բալում զանձեր ու հաղթանակ,
Եվ ճակատիդ դնեն ոսկե փառապատկ,
Յիշի՛ր, որ նախ փառքի դափնին ինձ է տրվել,
Եվ ճակատիս ցոլքը վճիտ հող է հիմա:*

Համառոտագիրը մշակվել է 2019թ. մայիսի 6-ին կայացած՝ «Քաղաքական միավորների դերը քաղաքական կոնսենսուսի կայացման գործընթացում. Միասին աշխատելը հնարավորություն է, թե՛՝ անհրաժեշտություն» վերնագրով քննարկման մասնակիցների կողմից արտահայտված կարծիքների հիման վրա:

Կրթր սեղանին մասնակցում էին անկախ վերլուծաբաններ, պետական պաշտոնյաներ, միջազգային կառույցների ներկայացուցիչներ:

Քննարկումը կազմակերպվել է Կոնրադ Ադենաուեր հիմնադրամի հետ համագործակցությամբ: